

պահեց, յարաբերութեան մտաւ Կոստանդնիս հետ, և որոշուած օր մը յարձակեցաւ Ալասի վրայ, թշնամի բանակը ճեղքելով Հայաստան մտնելու համար. և սակայն չյաջողելով՝ Կիպրոս վերադարձաւ։ Եզդիպտացիներն ու թիւրքմէնները տեսնելով Պետրոսի հեռանալը, իրենց վրէժը լուծեցին Հայերէն։ Այս վիճակին մէջ՝ երկու կուսակցութիւնն ալ որոշեց Կոստանդինը վար առնել, և տեղը դնել ուրիշ թագաւոր մը։ Կաթողիկ կուսակցութեան ընտրելին էր Պետրոս, իսկ ազգայնականներունը՝ Կոստանդին Գ-ի այրին Մարիամը։

Պետրոս Ալասի վրայ կատարած իր անյաջող յարձակումէն ետքը՝ կրկին պապին դիմած էր, Հայոց թագաւորութիւնը ձեռք բերելու համար. և երբ Վենետիկ կը գտնուէր, կաթողիկ պատգամաւորութիւնն հասաւ դիմաւորեց զինք, և առաջարկեց Հայոց թագաւորութիւնը։ Ասոր վրայ Պետրոս աճապարեց դառնալ Կիպրոս, անկէ Հայաստան անցնելու համար. բայց երբ Կիպրոս հասաւ, իր պալատականներէն սպաննուեցաւ 16 յունիս. 1369-ին։ Հետեւաբար ոչ իր կուսակցութիւնը, և ոչ Պետրոս չհասան իրենց նպատակին։ Եւ եթէ նոյն իսկ Հայաստան ոտք կոխէր Պետրոս, ո՞վ կրնայ երաշխաւորել որ ազգայնականները զրկարաց պիտի ընդունէին զինք. չէ՞ որ իրենք ալ իրենց կողմէ դիմում ըրած էին Մարիամին, որ վերջապէս Կոստանդին Գ-ի սպանուելով՝ «միաբան հաճութեամբ» թագապահ կարգուեցաւ, ինչպէս կ'ըսէ Դարբէլ, եր. 68։

Արդ, ինչպէս տեսնեց, Պետրոս Ա կուսակցութեան մը ընտրելին էր Հայոց թագաւորութեան համար. ընտրելի՞ն միայն, և ոչ ուրիշ բան։ Ո՛չ զահը բարձրացած է, ոչ պատկուած, և ոչ օծուած։ Այս պարագայով կը հաստատուի նաեւ Պետրոսի անոնով գտնուած հայատառ միակ դրամին կեղծ բլալը, ինչպէս իրաւամբ կը կասկածի նշանաւոր դրամագէտն Հ. Կ. Միպիւեան, իր «Դասաւորութիւն Ռուբինեան դրամոց» մէջ, եր. 69-70։

Աւելորդ է երկարել հոս Պետրոսի մասին ըսելիքներս, քանի որ ընդարձակօրէն խօսած եմ արդէն իմ «Լեւոն Ե Լուսինեան, վերջին թագաւոր Հայոց» պատմական աշխատութեանն մէջ (եր. 24-46), որուն տպագրութիւնը վերջանալու մօտ է։ Միայն համեմատութիւն մը կ'ուզեմ ընել մեր ժամանակակից դէպքերէ մէկին հետ, որ տեղի ունեցաւ ասկէ ջսան տարիի չափ առաջ, — 1884-ին երբ վախճանեցաւ Էջմիածնի Գէորգ Դ կաթողիկոսը, նոր ընտրութեան ձեռնարկուեցաւ և կաթողիկոս օծուեցաւ Մակար։ Միջբնեղեկի կուսակիցներն այս ընտրութեան դէմ ելան, և իրենց շրջանակին մէջ կաթողիկոս հռչակեցին Միջբնեղեկը։ Արդ՝ կրնանք ըսել թէ Միջբնեղեկ «կաթողիկոս պատկուեցաւ»։ այս տեսակ յայտարարութիւն մը պատմական սխալ չի՞ համարուիր։

Կ. Յ. ՔԱՍՏԱՋԱՆ



ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐ ՂԱՋԱՐ ՓԱՐՊԵՏՈՅՑ ՄԱՍԻՆՆԵՐ

Ա. — էջ 47. «Եղիալ կատարելապէս հմուտ երգողական տաղիցմ և հոգեբարձական յորդասաց յայտարարութեան»։ Ուղղ. «Եղիալ կատարելապէս հմուտ երգողական տաղիցմ և հոգեբարձական յորդասաց աստեղաբանութեան»։

Բ. — էջ 549. «Այլ ձեռք թափ այնպէս արարիմ, զի գեղիմ Հայոց այրբմտիւր որեարմ այլուր դիպիցամ ի գործ», Ուղղ. «Այլ ձեռք թափ այնպէս արարիմ, զի գեղիմ Հայոց այրբմտիւր որեարմ այլուր դիպիցամ ի գործ»։

Գ. — էջ 246. «Հայթայթամս իմմ առ չարի, և սուգ պատմառամաց մեծի և անաւոր հասելոյ տրտմութեամ հաշուելիմ», Ուղղ. «Հայթայթամս իմմ արշաղ, և սուգ պատմառամաց մեծի և անաւոր հասելոյ տրտմութեամ հաշուելիմ», — Երկար պաշարման դիմաւալու համար արշաղներ և պաշար կը հայթայթեմ մախապէս. (?)։

Դ. — էջ 80. «Ջայլ և այլ սեռս ի թոնոցմ որսացեալ ըագայիւք դարձաւ բերիցեմ», Ուղղ. «Ջայլ և այլ սեռս ի թոնոցմ որսացեալ ըագայիւք բարձեալ բերիցեմ»։

Ե. — էջ 23. «Եւ խոմարհեալք յամարգութիւմ

ամողորմութեամբ զբաւառէր ի բաժանումն: Ուղղ. « Եւ խոնարհեալք յամարգութիւն ամողորմութեամբ զհրեալք ի բաժանումն »:

Զ. — Էջ 29. « Ուր ոմամք զհետ ցուցմը և այն ծանցմը արշաւելով զհրեալսկանն և զաղեղմայիմ Եւսեփ քարառնեցին », Ուղղ. « Ուր ոմամք զհետ ցուցմը և այն ծանցմը արշաւելով զհրեալսկանն և զաղեղմայիմ և Եւսեփ քարառնեցին » (շ):

Ե. — Էջ 44. « Եւ զմացեալ քրիստոնէութեան հաստաց որոյ ամուսն », Ուղղ. « Եւ զմացեալ զհետ քրիստոնէութեան հաստաց որոյ ամուսն »:

Ը. — Էջ 77. « Որում սակաւ իմէ ժամանակի ամցելոյ՝ ընդզիմացեալ ոմանց ի զօրավար իշխանացմէ չայոց, մեթեալ ընկեցին զմա յիշխանութեանէ կաթողիկոսութեանն », Ուղղ. « Որում սակաւ իմէ ժամանակի ամցելոյ՝ ընդզիմացեալ ոմանց ի զօրավար իշխանացմէ չայոց մեթեալ ընկեցին զմա յիշխանութեանն կաթողիկոսութեանն », — Զօրավար բառի անպակասեցող զործածութիւնը (զօրավար իշխան) վերկայակի մը կասկածը կու տայ:

Թ. — Էջ 163. « Եւ ջանալիք երեսելի ի մէջ պայքի և ի մէջ ամենայն ազգաց », Ուղղ. « Եւ ջանալիք երեսելի ի մէջ Պարսից և ի մէջ ամենայն ազգաց »:

Ժ. — Էջ 197. « Եւ դարձեալ զի և կանքն իւր իսկ ի խմամս չարին միտէին համապագ », Ուղղ. « Եւ դարձեալ զի կամքն իւր իսկ ի խմամս չարին միտէին համապագ »:

ԺԱ. — Էջ 288. « Եւ ծաղեալ զմա պայկացն մերկացուցին զմա », Ուղղ. « Եւ ծաղեալ զմա Պարսկացն մերկացուցին զմա », (Չէ ամիցածիւն ուղղելի):

ԺԲ. — Էջ 308. « Որպէս առաքեալն և խոստովանողն տէր Գրիգորիոս, արարողն ուղիղ զործոց և ուսուցիչն յստակ և անհեղ վարդապետութեան », Ուղղ. « Որպէս առաքեալն և խոստովանողն տէր Գրիգորիոս, արարողն ուղիղ զործոց և ուսուցիչն յստակ և անհեղ վարդապետութեան »:

ԺԳ. — Էջ 575. « Քէ չճանայողութիւն Պերոզի ի յետահաւորութեան ըմադատեաց զիս մեռանի », Ուղղ. « Քէ չճանայողութիւն Պերոզի և չարաւորութեան ըմադատեաց զիս մեռանի »:

ԺԴ. — Էջ 577. « Յորմէ ի դառն ծառայութեանէ՝ մինչ կենդանի է՝ Արեաց աշխարհն զերծանել ոչ կարէ », Ուղղ. « Յորմէ ի դառն ծառայութեանէ մինչ կենդանի է՝ Արեաց աշխարհն զերծանել ոչ կարէ »:

Պօսքը Պերոզի վրայ է որ արդէմ մեռած էր և իր տեղը զաղարշ թագաւորաց:

ԺԵ. — Էջ 575. « Ջի քաջի առն քան զբազում ժամս հարսեաց կեցեալ շատ լաւ է մի օր ծանուցանել զլաւութիւն ամծին և մեռանի », Ուղղ. « Ջի քաջի առն՝ քան զբազում ժամս հարսեացեալ ի կալ շատ լաւ է մի օր ծանուցանել զլաւութիւն ամծին և մեռանի »:

ԱՐԵԱՐ

ԳԻՏԱԿԱՆՔ

ՄԱՐՏԻՆՈՅ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Այս վիճակը կը գտնուի Միջագետաց մէջ, որ հիմա կ'անուանի Էյ — Ճէդիլա, և սանճագ է Տիարպէթի վիլայէթին: Հին ատեն այս սանճագը կը կոչուէր Միգրոնիա՝ Միջագետաց արեւելեան կողմէ, և իր զլխաւոր թագաւորն էր Մարիկ (— Նոսահայիկ), որ այժմ աւան մի է փոքրիկ: Մարտին կը վայելէ արդ Գաւառին զլխաւորութիւնը, ուր կը նստի գաւառապետ Մուխասարըֆը: Բայց Մարտինոյ թեմը շատ աւելի կը տարածի յիշեալ գաւառէն դուրս՝ ինչպէս պիտի տեսնենք:

Բնակիչը Մարտին գաւառին մեծաւ մասամբ Բուրդ են: Թագաւորն մէջ կան չորս տոհմը՝ Բուրդաց, Միլիքիլիկ, Տալիկ, Միկտէլիլիկ և Միլիլիկիկ աշխարհները:

Իսկ շուրջը կան Էմիլիկ և Տարագիլիկ ցեղերը, հիւսիսային և արեւելեան կողմերը: Արաբ են Շամարները, որ կը բաժնուին ցեղերու: Ֆերպաղա, Սապէր, Լամարաբ, և այլն, և կը ծաւալին Մարտինէն մինչեւ Պաղատա:

Մարդ լեռան Քրդերը բազմաթիւ և հսկայատիպ են:

Տերիքի կողմերը կան՝ Մահմուտիկ, Ապապիկ, Մուստաֆիկ և Բուրի Գիւրտ ցեղերը: Միլիլիկներ Մարտինի հարաւ. արեւմտեան կողմն են, և կը տարածին մինչեւ Ուրֆա թագաւոր. Քիլիկ — Հայեան, Քիլիկ — Չիլիլիկ և Տարագիլիկ ցեղերը կը բնակին Մարտինի հարաւային արեւմտեան և հարաւային կողմերը: Նուսահայիկ ցեղ կան՝ Թալ (արապ), և Մարսիկ (Քիլդ) աշխարհները: Իսկ Միսիաթի սահմաններն են՝ Տալիլիկ և Հրիվիարի բազմաթիւ ցեղերը: